ԳԵՂԱՄԱ ԵՐԿԻՐՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Ըստ հայոց ավանդական պատմության, Հայկ նահապետի հետնորդ Գեղամը «յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր, և թողեալ զՀարմայ յԱրմաւիր հանդերձ որդւովք բնակել, ինքն զնայ զմիւս լերսամբն արևելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ: Շինէ զեզր ծովակին, և թողու անդ բնակիչս, և յիւր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ, և զշէնսն՝ Գեղարքունի, որով կոչի և ծովն»[1]:

Հիշատակված տեղանունների մեկնաբանությամբ հանգես են եկել մի շարք ուսումնասիրողներ: Ն. Ադոնցը, հենվելով Պլուտարքոսի տեղեկության վրա, ըստ որի Արաքսի գետաբերանի շրջանում բնակվող և հովվական կյանք վարող ցեղերը Տիգրան II-ի օրոք պատրաստակամություն հայտնեցին կռվել հռոմեացիների դեմ[2], կարծում է, որ նրանցից մեկը գել կամ գեղ կոչվող ցեղն էր, որի բնակության նախնական վայրը եղել է ժամանակակից Գիլանը: Այդ ցեղն այնուհետև բնակություն հաստատեց Սևանա լճի շրջանում և նրա անունով էլ զբաղեցրած տարածքը կոչվեց Գեղարքունի[3]: Ն. Մառը հայտնել է այն միտքը, թե Հայաստանում Gel-am-*ը այն ցեղն է, որի տարածման սահմաններում, Գեղամա լեռներ կոչվող բարձունքներում, հայտնաբերվել են պաշտամունքային կոթողներ՝ քաբե հսկա ձկներ և վիշապներ:* Gel *ցեղն ունեցել է նաև գայլ տոտեմը[4]: Գ. Հափանցյանը Գեղարքունիք երկրանվան սեպագիր աղբյուրներում վկայված* "Uelikuni" *կամ* "Uelikuhi" *տարբերակներն առաջացած է համարում* "velik" *կամ* "velak" *ցեղանունից, որը նշանակել է «* vel *ցեղից սերված»[5]: Գիտնականի համոզմամբ,* "vel" (*wel*) *ցեղանունը սկզբնապես ուրարտերենի լեզվական հիմքի վրա կարող էր նշանակել «ժողովուրդ», եթե այդ* "vel" *էթնիկական անունը ազդակից է ուրարտերենի* "veli" *(«զորք, դունդ») բառին[6]: Թ. Հակոբյանն ընդգծել է այն փաստը, որ «Գեղամա երկիր, Գեղարքունիք անունն ունի էթնիկական ծագում»[7]: Ս. Բարխուդարյանի ենթադրությամբ սեպագիր արձանագրություններում հիշատակված երկրանվան ձևերն «ի-*

---

[1] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խ ո ր ե ն ա ց ի). Տփղիս, 1913, էջ 40–41:*

[2] *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. Երևան, 1981, էջ 238, ծանոթ. 24:*

[3] Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с.420.

[4] Н. Я. М а р р. Этно - и глоттогония Восточной Европы. Избранные работы, т. V, М. – Л., 1935, с. 56.

[5] Г. А. К а п а н ц я н. Историко-лингвистическое значение топонимики древней Армении (*այսուհետև՝* ИЛЗТДА). Ереван, 1940, с. 22.

[6] Г. А. К а п а н ц я н. Историко-лингвистические работы. Т. II, Ереван, 1975, с. 82.

[7] *Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Սյունիքի թագավորությունը. Երևան, 1966, էջ 165:*

բենց լեզվական առանձնահատկությամբ նույն իմաստն ունեն և նշանակում են գելերի երկիր»[8]*: Ս. Ումառյանի կարծիքով տեղանունն ունի պաշտամունքային ծագում, որի անվանահիմքն է սանսկրիտում պահպանված* ulka *(«կրակ») արմատական բառը*[9]*: Ս. Պետրոսյանը մերձևանյան ցեղերի* U̱(e)duri Etiuni *անվանումը կապում է թրակյան* βεδυ *(ջուր) բառի հետ և հինթրակյան ծագում վերագրում մերձևանյան ցեղամիության ցեղերին, որոնց թվում և «արքայական» գեղ* (*u̱el) *ցեղին: Հեղինակի կարծիքով հետագայում ցեղանունը դարձել է այդ շրջանի հայերի ազգագրական անունը*[10]*: Ա. Պետրոսյանը հավանական է համարում, որ* u̱el *արմատից կազմված հնդեվրոպական ցեղանունների և տեղանունների առկայությունը հավաստի է դարձնում հայկական և հնդեվրոպական ձևերի կապը հնդեվրոպական արմատի հետ: Ցեղանուններում և տեղանուններում այդ արմատը հանդես է գալիս* *u̱el-k *ձևով հաճախ* <-u->*-ի հետագա ընդարձակմամբ, հետևաբար,* u̱elku-*ն պետք է հնչեր* u̱elǝku, *որը և բացատրում է* gełak – (-uni *ածանց) հայկական ձևը*[11]*: Մասնագետի կարծիքով, մ.թ.ա. VIII դ. կեսերին Սևանա լճի արևմտյան ափին ապրելիս է եղել մի ցեղ, որը պաշտել է հնդեվրոպական* *u̱el *անունով աստվածությանը և ունեցել է իր պաշտամունքային պիտույքները (վիշապներ), իսկ երկիրը, որտեղ բնակվել է այդ ցեղը, դուցե, նաև ցեղը՝ անվանվել է այդ արմատից կազմավորված անունով*[12]*: Ըստ Գ. Արեշյանի՝ «*U̱elikuni*» կամ «*U̱elikuḫi*» տեղանվան մեջ վկայվել է հ.-ե.* *ulk'u *(«դիշատել, սպանել») բայարմատը*[13]*: Գ. Ջահուկյանի ստուգաբանությամբ «Գեղարքունի» տեղանվան ուրարտական աղբյուրի՝* U̱elikuni*-ի մեջ առկա է* u̱eli *«ժողով, ջոկատ, աշխարհաղոր» բառը*[14]*: Վ. Խաչատրյանը նշում է, որ «Գեղ լեռան և Գեղարքունիք դավառի անունները բաղկացած են հայ հ.-ե. գեղ «գեղեցկություն» արմատից ու բնութագրում են տեղանքը: Դրանցից երկրորդի մեջ ակունիք բաղադրամասը, որ հայերենում մասնիկների միացություն է, ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է -արքունիք»*[15]*:*

Մ.թ.ա. 6–3-րդ հազ. վերաբերող Գեղամա լեռների ժայռապատկերներում, որոնցում արտահայտված են տեղաբնիկների հավատն ու բնապաշտական պատկերացումները, կարելի է տեսնել սրբացված կենդանիների, բույ-

---

[8] *Դիվան հայ վիմագրության. IV, Երևան, 1975, էջ 5:*

[9] *Ս. Ումառյան. Սյունիքը դիցարան. Երևան, 1981, էջ 43:*

[10] *Ս. Պետրոսյան. Մերձևանյան ցեղերի միությունը հայկական լեռնաշխարհում.– «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, №1, էջ 187-198:*

[11] А. Петросян. Отражение индоевропейского корня *u̱el- в армянской мифологии. – "Вестник общественных наук", 1987, № 1, с. 66, прим. 60.

[12] *Նույն տեղում, էջ 66:*

[13] *Տե՛ս Յ. Կարագեոզեան. Սեպագիր տեղանուններ. Երեւան, 1998, էջ 140:*

[14] *Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան. Ուրարտու-Հայաստան. Երևան, 1988, էջ 147:*

[15] *Վ. Խաչատրյան. Հայաստանը մ.թ.ա XV–VII դարերում (Հայոց հին պատմություն). Երևան, 1998, էջ 134:*

սերի, երկնային մարմինների ուղղակի և ոճավորված պատկերներ[16]: Գեղամա լեռներում՝ արոտավայրերի, լճերի ու աղբյուրների մոտ հայտնաբերվել են նաև ձկնակերպ հսկա քարակոթողներ: Դրանց մի մասը բարձրաքանդակ պատկերներ են[17]: Գ. Ղափանցյանը դրանք համարում է մոտավորապես մ.թ.ա. XX դ. կոթողներ, որոնք անձնավորում են Արա Գեղեցկին և նվիրված են նրա պաշտամունքին[18]: Արան նախևառաջ եղել է «մեռնող ու հառնող արեգակնային աստվածություն, որի բոլոր նախատիպերն ունեցել են բուսա-երկրագործական պաշտոններ»[19], ինչպես եգիպտական Օսիրիսը կամ բաբելական Թամուզը[20]:

Հին հայոց հավատալիքների համաձայն, արևը «պատկերացվել է կտուցին օղ բռնած թռչունի կամ զույգ թռչունների, հրեղեն աղջկա, մանկան կամ պատանու (արևամանուկ), աչքի (ակն տունջեան, ակն արևու), շողարձակ թանկարժեք քարի, լուսացայտ անիվի...կերպարավորումներով»[21]: Գեղամա ժայռապատկերներում արև պատկերող նշանները ճառագայթավոր անիվի ձև ունեն: Աստղային համակարգ ներկայացնող ժայռապատկերներից մեկի վրա «արևը պատկերված է ճաճանչանիվի ձևով, վրան մի խոշոր թռչուն, կտուցը դեպի հրավառ գունդը»[22]: Մ.թ.ա. II հազ. վերջին և I հազ. սկզբին պատկանող բրոնզե գոտիների վրա արևը պատկերված է ա-

---

[16] Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). հ. I, Երևան, 1971, էջ 250-254, 262-263:

[17] Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Արա Գեղեցկի պաշտամունքը. Երևան, 1940, էջ 111-154:

[18] Նույն տեղում, էջ 152, 154–167:

[19] Ա. Վ ա ր պ ե տ ե ա ն. Ովքեր են ի վերջոյ արիացիները. Երևան, 1990, էջ 115: Արա Գեղեցիկի մասին առասպելը «տարբեր ձևերով կամ նրա որոշ հատվածները կարելի է հանդիպել V–IV դդ. հեղինակ Կտեսիաս Կնիդացու մոտ՝ Դիոդոր Սիկիլիացու միջնորդությամբ, անտիկ ժամանակաշրջանի պապիրուսային մի սիրավեպում, Պլատոնի «Հանրապետություն» աշխատության մեջ և Մովսես Խորենացու մոտ» (ՀԺՊ. հ. I, էջ 481): Ն. Ադոնցը ժամանակին այն միտքն է հայտնել, թե «Արայի և Շամիրամի անվան տակ թաքնված են երկու հնագույն աստվածներ, որոնք երկայն ճանապարհ են անցել մինչև թագավոր և թագուհի դառնալը և ոլոր մոլոր հետքեր են թողել անցած ճանապարհի վրա, որ պետք ունին հետազոտության և լուսաբանության» (Ն. Ա դ ո ն ց. Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, էջ 233): Արա անունը հանդիպում է Ավեստայում, որը սոսկ մի հավատացյալի անուն է (Նույն տեղում, էջ 260): Իրանագետ Բարթոլոմեն Արա-ն համարում է Armatay (Arem + matay «բարեմիտ» կամ «լավ մտածող») բառի կրճատ կամ փաղաքշական ձևը: Armatay-ո հետազոտողի կարծիքով ունեցել է երկրի, ինչպես և աստվածության նշանակություն (Նույն տեղում, էջ 260): Ն. Ադոնցը գտնում է, որ Բարթոլոմեի ստուգաբանության ճիշտ լինելու դեպքում, Արան, իր պաշտամունքային նշանակությամբ և լեզվական առումով, իբրև բառ, նույնանում է /Սպանդ/-Արա-մետի («սուրբ երկիր, «երկրի ոգի») հետ (Նույն տեղում, էջ 260):

[20] История древнего мира, Древний восток. Египет, Шумер, Вавилон, Западная Азия. Минск, 1999, с. 361. Դեռևս XIX դ. վերջին անգլիացի գիտնական Ա. Սեյսը հայոց Արային բնութագրել է որպես հին հայկական արևի աստված (Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 10): Այս տեսակետի օգտին է խոսում ar- կամ or- հնդեվրոպական բայարմատը, որը բովանդակում է «հուն. or-«բարձրանալ» /ornumi, ornuo/, լատ. or-(orior) «ծագել, ծնվել, բարձրանալ» (այստեղից է oriens «արևելք»), իութ. arā (i)- բարձրանալ, ընդվզել և հայոց ar (i)- «բարձրանալ, հարություն առնել» /յառնեմ-յարեայ, իսկ հրամայականը՝ արի՛, մաքուր «ար-» սկզբնական արմատից և նշանակում է «վե՛ր կաց», «կանգնի՛» (Նույն տեղում, էջ 93-94): Նկատելի է, որ նշված իմաստային հատկությունները բնորոշ են արևին և հաստատում են Արա աստծո արևային բնույթը:

[21] Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը. Երևան, 2001, էջ 7:

[22] ՀԺՊ. հ. I, էջ 256:

նիվի, սայլի, մարտակառքի ձևով[23]: Հին արևելյան կրոնապաշտամունքային գրավոր աղբյուրների և հայկական բանահյուսության տվյալների համաձայն, արև աստվածն իր երկնային օրապտույտը կատարում էր մարտակառքով, սայլով, նաև մակույկով՝ հրեղեն ձիերի կամ երկնային ցուլերի օգնությամբ: Հին Հայաստանի կիրառական արվեստի հուշարձանների վրա արևը պատկերվել է կենդանիների ու թռչունների տեսքով[24]:

Արժանահիշատակ է, որ ռուսերենում գոյություն ունի "красное солнышко" («կարմիր արև») արտահայտություն, որի մեջ "красное" որոշիչն ունի «գեղեցիկ» նշանակությունը[25]: Բնականաբար հայերենում գոյություն ունեցող «կարմիր արև» դարձվածի մեջ «կարմիր» բառը նույնպես ունի «գեղեցիկ» իմաստը: Ուրեմն՝ "красное солнышко"-ն և «Արա Գեղեցիկը» համարժեք հասկացություններ են: Ընդ որում՝ "красное" «հասկացությունը գեղեցիկ իմաստով կապված է «լույսի» մասին պատկերացման հետ, հենց արշալույսի (շառագույն այգաբացի) և ձիերի մասին, երբ կառքով դուրս է գալիս առավոտյան արևը, այսինքն՝ բառը համատեղում է առասպելական նշանակությունը. «արշալույս+ արև (վաղորդյան) +ձի (կարմիր)»՝ էտրուսկների տոտեմը, այստեղից և "красное" (կարմիր) գույն, "краса" (գեղեցկություն) և այլն»[26]: Հետևաբար՝ արևի գեղեցիկ (գեղ-ից, որը համարվում է բնիկ հայերեն բառ և ցեղակից լեզուներում ունի գեղեցկություն, դեմ, կերպարանք, տեսք, փայլ, գույն, երևույթ, կերպ իմաստները)՝ անվանումը, կապված լինելով լույսի մասին ըմբռնման հետ, ժամանակի ընթացքում կարող էր դառնալ առանձին՝ լույսի աստվածություն և սլաշտվել տեղաբնիկների կողմից, ինչպես որ հնդիրանական Indra աստծուց անջատվել է նրա Varthragna «Վիշապաքաղ» մակդիրը և դարձել Վահագն[28]:

Հնում «յուրաքանչյուր բնակավայր ունեցել է իր հովանավոր աստվածը, պաշտամունքային կենտրոնը, դիցաբանությունը, տոները՝ կապված գլխավորապես գյուղատնտեսական բոլորաշրջանի հետ»[29]: Երկիրը կամ շրջանը սովորաբար կոչվել է իր կենտրոնի (գյուղ, քաղաք) անունով[30]:

---

[23] Նույն տեղում, էջ 269:

[24] Նույն տեղում:

[25] И. И. Срезневский. Материалы для словаря древнерусского языка по письменным памятникам, в трех томах. Т. I, СПб., 1893, с. 1317-1318.

[26] Н. Я. Марр. Նշվ. աշխ., էջ 115: «Հայ գրականության մեջ ժողովրդական դյուցազներգությունը Վարդան-Արևի մոտ սլահպանել է նրա ornans (կարմիր) մականունը՝ հիմք տալով մեզ Vardan Karmir-ը թարգմանել որպես Կարմիր արև» (Նույն տեղում, էջ 271):

[27] Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. I, Երևան, 1971, էջ 532–533: Մեյեն և Պոկորնին բխեցնում են *uel- ցանկանալ արմատից (տես՝ Գ. Բ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան. Երևան, 1987, էջ 198):

[28] Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 47:

[29] Դ ж. Г. М а к к у и н. Хетты и их современники в Малой Азии. М., 1983, с. 119.

[30] ИЛЗТДА, с. 89. Մ.թ.ա 782 թ. Արգիշթե I-ի (մ.թ.ա 786–764) զորքերը Սևանա լճի հյուսիսարևմտյան ափին գրավում են Իշտիկունի քաղաքը (ՀԺՊ. հ. I, էջ 304), այն եղել է սահմանակալ բերդաքաղաք (այժմյան Լճաշենի տարածքում): Տեղանվան հետ իմաստային որոշակի ընգհանրություն ունի ռուսերեն истукан («կուռք») բառը: Ըստ Ն. Մառի՝ այն իրենից ներկայացնում է I-նախածանցով stu-kan խաչավորված հիմքը կամ stu հիմքը Kan

Հետևաբար Uelekuni *կամ* Uelekuhi *երկիրն անվանվել է իր վարչական և պաշտամունքային կենտրոնի անունով*[31], *իսկ որպես տեղաբնիկների ցեղային անվանում հանգես են գալիս Գեղնի (Գեղնիկ) կամ Գղնի*[32] *անունները՝ համարժեք հայ էթնիկական անվանը, որոնք «ուղղակիորեն առնչվելով Գեղ-Գեղաքունի-Գեղամ ծագումնաբանական փոխադարձ կապերի մեջ գտնվող շարքին, պետք է գիտվեն որպես հայության միայն մի հատվածի (ազգագրական խմբին) հատկացված անվանումներ»*[33]*: Հայաստանում Միհրի պաշտամունքի հանգես գալը պայմանավորեց այդ աստվածության անվամբ տեղանունների առաջացմանը Գեղամա երկրում*[34]*:*

(>gan) *ածանցով, իսկ ռուսերեն բառի* *I-š-tu[r]-kan *նախնական ձևում առկա է չուվաշերեն հնագույն* tor- ϑ *«աստված» ձևը: Քանի որ I-, նախածանցը հեշտությամբ փոխարինվում է* a - II o -, *համազոր նախածանցներով (հմմտ.* i-štar >A-ster- i–a, I-ϑar II o–ϑ ar, I-til II A- tnl), *որը հիմք է հանգիսացել գիտնականի համար* I-š-tu[r] kan-*ի կողքին վերականգնել նրա նմանակը՝* *A-star-gan *(* Н. Я. М а р р. *Նշվ. աշխ., էջ 337): Հետևաբար, Իշտիկունի քաղաքանունը կարելի է մեկնաբանել որպես «Կռատուն», «Կռատեղի»:*

[31] *Վանի թագավորության շրջանում այդ բնակավայրը վերակառուցվել և անվանակոչվել է Խալդիի քաղաք* (Г. А. К а п а н ц я н. Историко-лингвистические работы, т. II, с. 81, примеч. 2): *Արամազդ լեռնագագաթի արևելյան ստորոտում, Գելոյի ձոր գետակի միջին հոսանքի շրջանում, տեղադրված է Ծաղկաշեն գյուղը: Այդ անունը գյուղին տրվել է նախկին Քյարիմքենդ անվան փոխարեն (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. II, Երևան, 1988, էջ 835), սակայն, ամենայն հավանականությամբ, տեղանքի առանձնահատկության շնորհիվ բնակավայրը Ծաղկաշեն է կոչվել նաև հնում: Գյուղում գտնվում է Ս. Հովհաննես եկեղեցին* (IX–X *դդ.), որը Վարդավառի տոնին հանդիսանում է ուխտագնացության վայր: Գեղարքունիքի մարզում գոյություն ունեն Ծաղկաշեն և Ծաղկեվանք անվամբ գյուղատեղիներ: Ծաղկաշենը գտնվում է Գեղհովիտ գյուղից 18 կմ հեռավորության վրա, դեպի Սելիմի (Սուլեմա) լեռնանցքը տանող ճանապարհի ձախ կողմում: Այս նախկին բնակավայրը, անշուշտ, նույնանում է պատմական Գեղարքունիք գավառի Ծաղկա գյուղի հետ (Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց (այսուհետև՝ Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն). Թիֆլիս, 1910, էջ 513): Լիճք գյուղի հարավարևմտյան եզրին բարձրացող բլրի վրա պահպանվել է Ծաղկեվանքի Ս. Աստվածածին եկեղեցին: Գր. Ղափանցյանը համանման մեկ այլ տեղանվան մասին գրել է. «...Արագածից քիչ դեպի արևելք կա փոքր, բայց նույնպես նշանավոր մի սար, որ կոչվել է «Արայի լեռան /= այժմյան «Ծաղկեվանք» սարն է...: Այս սարի միջում կա խորն ընկած մի մաս իր այրով, ուր կա նաև մի հարթ դերեզմանաքար (հետագայում չինված), որը պատկանում է Ս. Վարվառեին: Այս «Ծաղկեվանքը», որ տառացի նշանակում է «ծաղիկների տեղ», կամ «վանք», պաշտամունքի վայր էր մինչև վերջերս, ուր շրջակա և հեռավոր գյուղերից (մինչև իսկ Երևանից) զատիկից 40 օր հետո, համբարձումին գալիս էին ուխտ: Իրոք այս տոնը ծաղիկների տոնն է եղել կապված Արայի հին (բուսական և գարնանային) բնույթի հետ...: Այժմյան Ծաղկեվանք անունը, որը տրվում է Արայի լեռան, վկայում է, որ Արայի պաշտամունքը կապված է եղել և ծաղկի հետ, նրա տոնի հետ համբարձմանը, երբ իրոք ծաղկի գովքն է արվել» (Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 99-100): Գր.Ղափանցյանի կողմից այդ տեղանվան քննությունը բացատրում է նաև Ծաղկաշեն գյուղանվան ծագումնաբանական արմատները:*

[32] *Ե ր ե մ ի ա վ ա ր դ ա պ ե տ. Բառգիրք հայոց. Ցալիկոռնայ, 1698, էջ 63, 67, Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 536:*

[33] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 190:*

[34] *Սյունիքի 12 գավառների եկեղեցու հին հարկացուցակում (այսուհետև՝ «Հարկացուցակ»), Գեղարքունիք գավառում, նշված է Մեհոդած անունով գյուղ (Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 513): Տեղանունը նշանակել է Միհրի գահ* (*Mehagac<*Mehragac) (Г. А. К а п а н ц я н. Историко-лингвистические работы, т. II, с. 136): *Մեհոդածը «թեև գյուղանուն է, սակայն, ամենայն հավանականությամբ, ծագում է մոտակայքում գտնվող ինչ-որ լեռան համանման անունից» (Ց ո վ. Կ ա ր ա գ ե ո զ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 15): «Հարկացուցակ»-ում Մեհոդածը նշվել է Արգիճի, Զագ (Երանոս) և Կածիք (Աստղաձոր) գյուղերի միջև (Ս տ. Օ ր բ ե լ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 513–514): Այդ փաստը ենթադրել է տալիս, որ մեզ հետաքրքրող լեռը և գյուղը պետք է փնտրել նշված բնակավայրերի շրջակայքում: Դիտարկումները ցույց են տալիս, որ Մեհո-*

Հայտնի է, որ հեթանոսական շրջանում պաշտամունքի առարկա են եղել աղբյուրները, որոնց վերագրվել է տարբեր հիվանդություններ բուժելու հատկություն: Դրանք ժողովրդի մեջ հայտնի էին «լուսաղբյուր» և «կաթնաղբյուր» անուններով: Ջրի պաշտամունքի վերապրուկները պահպանվել են այդ աղբյուրներին (հատկապես հանքային) մատուցվող զոհաբերության և պաշտամունքի արարողություններում[35]: Այդպիսի մի աղբյուրից գոյացած ավազան այսօր էլ գոյություն ունի Գեղարդա վանքի քարայրային կառույցներից մեկում[36]: Ամենայն հավանականությամբ, Գեղարդ տեղանունն առաջացել է նախնական *Գեդվարդ անվան (Գեդ- «լույս» /հիմքում՝ արև) և վարդ («ward, werd «ջուր = խեթ. watar, wadar «ջուր», հայ. ur̄d «գետ»)[37] ձևավոխությունից՝ ստանալով նոր իմաստավորում՝ «լուսաղբյուր»: Գեղարդա վանքը նման է խեթական ամենախոշոր սրբավայրին (Բողազքյոյից մոտ 1 մղոն դեպի հյուսիս-արևելք): Այստեղ, «ժայռի մեջ, ուր միաժամանակ բխել է աղբյուր, եղել են տարբեր չափերի

գած լեռը նույնանում է Մադինա գյուղից արևմուտք, 2829մ բարձրություն ունեցող Արմաղան (Աղմաղան, Մաղմաղան) լեռան (Ա. Ա. Ա ս լ ա ն յ ա ն, Հ. Ղ. Գ ր դ ե ա ր - յ ա ն. Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան. Երևան, 1981, էջ 33), իսկ Մադինան՝ Մեհոգած գյուղի հետ՝ լեռանը մոտ գտնվելու պատճառով: Հ.Կարագյոզյանի կարծիքով, Լուերոն ցեղանունից է ծագում (Սարգուրի II-ի (մ.թ.ա. 764–735) Գանձագրան տարեգրության մեջ, մ.թ.ա. 741թ. կատարված դեպքերի կապակցությամբ հիշատակվել է որպես Լուերունիսլի, իսկ Ռուսա I-ի (մ.թ.ա. 735–713) Ծովինարի արձանագրության մեջ ցեղանունը հանդես է գալիս որպես երկրանուն՝ Լուերուխե) Աղմաղան լեռնանունը (Յ ո վ. Կ ա ր ա գ ե ո զ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 263–265): Արմաղանի գագաթին գտնվող լճակի եզրին պահպանվել են ավերակ մատուռ և տապանաքարեր: Լեռնագագաթը ուխտագնացության վայր է Վարդավառի տոնի ժամանակ: Աշխարհագրական հատկանիշի հիման վրա ստեղծված նոր տեղանուն է Արեգունի լեռնանունը: Ենթադրվում է, որ այդ անունով հնում եղել է նաև համանուն բնակավայր Սևանա լճի արևելյան ափին, որին թուրքերը թարգմանաբար անվանել են Գյունեյ (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. I, Երևան, 1986, էջ 420–421): Այն, թերևս, նախկին Սոդք գավառի Արևիսաբակ գյուղն է, որը վկայվել է «Հարկացուցակ»-ում (Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 514):

[35] Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 9: Խեթերի մոտ նույնպես հատուկ պաշտամունքի առարկա են եղել աղբյուրները (Դ ж. М а к к у и н. Նշվ. աշխ., էջ 122):

[36] «Կոչվել է Այրիվանք՝ քարայրային կառույցների պատճառով, իսկ XIII դարից՝ վանքում պահված Ս. Գեղարդի պատվին՝ նաև Գեղարդ» (Հայկական սովետական հանրագիտարան. հ. II, Երևան, 1976, էջ 712): Ն. Մառի կարծիքով, Ajdahak (պարսկերեն՝ «վիշապ») տերմինը, որն եղել է տոտեմի անվանում, իր հետքն է թողել մարց Աժդահակ թագավորի անվան և հայկական Հաշտեան գավառանվան մեջ: Մառը գտնում է, որ բառի հիմքը հայերի մոտ երևան է գալիս ավելի ուշ ձևով որպես asteay> aste-y[a] նշանակելով «նիզակ», «նետ», և իմաստի առումով այդ առարկան կապում է օձի հետ որպես խոցող գործիք՝ խայթ, ըստ օձի գլխի ու նետի պատկերավոր նմանության: Նա նույն ծագումն է վերագրել հայերեն Gexard անվանը, որի gel հիմքը դիտարկել է որպես «օձ» նշանակությամբ բառ: Նիզակի պաշտամունքը, որով խոցված է եղել Քրիստոսը, հեղինակը համարել է քրիստոնեացված ժառանգություն (Н. Я. М а р р. Նշվ. աշխ., էջ 57–58), Ա. Պետրոսյանի կարծիքով *uel արմատի հետ կարող է կապված լինել և Gelard-ը («մեծ նիզակ»), որտեղ ard-ը նիզակի տեսակ է (А. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 57):

[37] ИЛЗТДА, с. 87. Համեմատության համար կարելի է վերցնել Գեդվրոտ գյուղանունը Սյունիքի Այլախ գավառում (Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 511): Մեր նախնիների հնագույն հավատալիքների համաձայն «լեռնային աղբյուրների ու գետերի ջրերը ամրքում էին մարդկանց սիրությունը, վիշտը, հոգեկան ու ներքին հիվանդությունները, անասունների տարափոխիկ հիվանդությունները: Հմայական գործողություններով, ջրի օգնությամբ մարդիկ ձգտում էին երեխա ունենալ, նորահարսները ցորենի հատիկներ էին գցում աղբյուրների մեջ և այլն: Այս ամենը անքակտելի կապի մեջ էր օրգանական աշխարհի վերածնման ու զարթոնքի գաղափարի հետ» (ՀԺՊ, հ. I, էջ 272):

երկու բնական այրեր: Այդ ժայռափոր տաճարը շատ բանում հիշեցնում է ջրի պաշտամունքի հետ կապված մյուս անատոլիական սրբավայրերը»[38]:

Հին հնդեվրոպացիների տնտեսության մեջ ոչխարի նշանակալից դերն արտացոլված է մշակութային սովորույթում «ոչխարի» և «բրգի» պաշտամունքային նշանակության մեջ[39]: Խեթական Տելեպինու աստծու մասին առասպելում, նրա առջև կանգնեցվում է կենաց ծառ, սրի վրա կախվում է ոչխարի գեղմը[40]: Խեթալուվիական ծիսական արարողություններում ոչխարը հանդիսացել է հիմնական պաշտամունքային կենդանի[41]: Հին Եգիպտոսում (միջին թագավորության շրջան) ոչխարի կերպարանքով է պատկերվել XII հարստության հիմնադիր Ամենեմխեթ I-ի հովանավոր Ամոն աստվածը, որը, դառնալով պետական աստվածություն, նույնացվել է հին պետական աստվածության՝ արևի Ռա աստծո հետ և կոչվել Ռա - Ամոն[42]:

Ուշադրավ է, որ հին Հունաստանում (Արկագիայում) ժամանակին լույսի աստվածություն համարվող Ապոլլոնը նույնպես պատկերվել է ոչխարի կերպարանքով[43]: Արգոնավորդների արշավանքի մասին առասպելում Կողքիսում իշխող Հելիոս աստծո որդի Էյեթոսը Նեփելե աստվածուհու զավակներին փրկած ոսկեգեղմ ոչխարը (Հերմես աստծո շնորհը) զոհաբերեց Զևսին, իսկ գեղմը կախել տվեց պատերազմի աստված Արեսի սրբազան անտառում: Ըստ առասպելի, անտառում ոսկու պես շողշողուն գեղմին մշտապես հսկում էր վիշապը, որի աչքերն անդամ քնելիս երբեք չէին փակվում[44]: Այս կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կարմիր բլուրից գտնված գոտին: Դրա վրա պատկերված են առյուծի վրա կանգնած Խալդին, ցուլի վրա կանգնած Թեյշեբան և արևի աստված Շիվինին, որոնք հետապնդում են թևավոր ոչխարին[45]: Բիայնական դիցարանի առաջին եռյակը կազմող գլխավոր աստվածությունների կողմից հալած-

---

[38] Դ ж. Г. М а к к у и н. Նշվ. աշխ., էջ 129.

[39] Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. 1-2, Тбилиси, 1984, с. 581. Հին պատկերացումների համաձայն «խոյ գլուխ է հոտի և պարգևատու» (А н а н и а Ш и р а к а ц и. Տիեզերագիտութիւն և տոմար. Երևան, 1940, էջ 20):

[40] Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 582: Հետաքրքիր է այն տեսակետը, ըստ որի մ.թ.ա. VIII-VII հազ. ժայռապատկերներում խոյերի նկարները, որոնք տրված են շեշտված եղջյուրներով, վկայում են գոյություն ունեցող խորհրդապաշտության մասին, իսկ արևապաշտության հետ աղերսվող պարուրաձև եղջյուրներն իմաստավորում էին հավերժություն, քանի որ արևը խորհրդանշող հավասարաթև խաչի և այդ պարույրների զուգորդումը վերաճեց կեռ խաչի, ապա սկավառակի (տես՝ Ա. Վ а р п е т е а н. Նշվ. աշխ., էջ 33): Այս առումով ուշագրավ է Գեղարքունիք գավառի Առնեղի գյուղանունը, որի մեջ առկա է հայ. հ.-ե. առն «վայրի խոյ» արմատը (Վ. Խ а չ а т р յ а н. Նշվ. աշխ. էջ 44):

[41] Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 582:

[42] История Древнего мира, с. 146-147, 275.

[43] Ն. Կ о ւ ն. Հին հունական լեգենդներ և առասպելներ. Երևան, 1979, էջ 33, ծանոթ. 1:

[44] Նույն տեղում, էջ 309, 311: Ոսկե գեղմի համար արշավանքի մասին լեգենդի առաջացման հիմքում ընկած այն իրողությունը, որ «ավանդությունների համաձայն, Կովկասում ոսկին արդյունահանում էին ոսկեբեր գետի ջրերի մեջ սուզելով ոչխարի մորթին: Գեղմը, որի վրա նստածք էին տալիս ոսկու մասնիկները, ձեռք էր բերում մեծ արժեք» (Большая советская энциклопедия, т. 17, второе издание. Том подписан к печати 30 октября 1952 г., М., с. 157).

[45] С. И. Х о д ж а ш, Н. С. Т р у х т а н о в а, К. Л. О г а н е с я н. Эребуни. М., 1979, с. 104.

վող ոչխարն ընկալվում է որպես տեղաբնիկների գլխավոր աստվածության պաշտամունքի խորհրդանիշ: Այդ դրվագում, փաստորեն, գեղարվեստորեն արտահայտվել է հակառակորդի դեմ տարած հաղթանակը:

Պետք է կարծել, որ Հայաստանում լույսի աստվածությունը մարմնավորող կենդանու՝ ոչխարի կամ գառան մորթին, ինչպես ցուլինը հայտնի պատկերաքանդակում[46], դրվել է բագինի վրա և պաշտվել: Այդ պաշտամունքային հիմքի վրա ձևավորված տեղանուն է Գեղամի դաստակերտի Գառնի անվանումը[47]: Ըստ պատմահայր Խորենացու, Հայկյան Գեղամը «...չինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ...ի Գառնկայ թոռանէ անուանեցաւ Գառնի»[48]: 1217 թ. Այրիվանքում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում վկայվել է. «...արքայանիստն Գեղամի, որ Գառնի...»[49]: Գառնիում հայտնաբերված «Վիշապի» սեպագիր արձանագրության մեջ Գեղամի դաստակերտի անունը վկայվել է որպես Գելամիա: Այդ բնակավայրը եղել է Գիարնիա երկրի կենտրոնը[50]: Ակնհայտ է, որ նույնիսկ սեպագրական շրջանում միևնույն բնակավայրի անվանումներից մեկը կրել է նաև երկիրը կամ շրջանը:

*Գեղամ անվան («*uel-m՝- *u̯el-ից»)[51] ըմբռնումը տեղաբնիկների կողմից մատնանշում է Գեղամա ծով տեղանվան, անշուշտ, թարգմանաբար տրված lychnitis-լուսավոր, անվանումը (հուն. λυχνος-«ճրագ, կանթեղ» բառից)[52]:*

---

[46] *Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Նշվ. աշխ., լուս. N 7: Գեղմն և գառն. հուն.* εἶρος *«գեղմն»,* ἀρήν *«գառ» բառերի հետ՝ համարվում են սերված սանս.,* var, *զնդ.* var *«ծածկել, պահել» արմատից (տե՛ս Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 519, 535-536):*

[47] *Ա. Վ ա ր պ ե տ հ ա ն. Նշվ. աշխ., էջ 32-33: Ս. Ումանյանը կարծում է, որ «Գառնի անվան հիմքը* * guher *է, որից հին հնդկերենում կա* ghrna *(գառնա) «չոգ», «այրվող», փոխաբերական իմաստով «արևոտ» (Ս. Ո ւ մ ա ռ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 52): Գ. Ջահուկյանը Գառնի տեղանունը ծագած է համարում ուրարտերեն* garini *«բերդ, ամրոց» բառից (Գ. Բ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Ստուգաբանություններ.– ՊԲՀ, 1963, №4, էջ 96. Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Գ. Բ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն, Գ. Խ. Ս ա ր գ ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 147):*

[48] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 41:*

[49] *Ա. Ս. Մ ա թ ե ւ ո ս յ ա ն. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար. Երևան, 1984. էջ 105:*

[50] *Յ ո վ. Կ ա ր ա գ ե ո գ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 95, 132: Ըստ Հ. Կարագյոզյանի՝ «Գելամիա* > *Գեղամի բնակավայրը եղել է Գիարնիա* > *Գառնի երկրի կենտրոնը, որը, սակայն, մոռացության է մատնվել և հետագայում երկրի անունը հատկացվել է նրա կենտրոնական բնակավայրին» (Յ ո վ. Կ ա ր ա գ ե ո գ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 132): Ա. Պետրոսյանը Gelam անունը ծագումնաբանորեն կապում է Սևանա լճի արևմտյան և հարավային մասում ու Գեղամա լեռներում հնդեվրոպական* *uel արմատով կազմված տեղանունների հետ (*Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն. *Նշվ. աշխ., էջ 63): Վ. Խաչատրյանը Գեղամ անունը համարում է վերցված տեղանունից՝ հայ. հ-ե. ամալ «լցնել» բայարմատի հավելումով, որը նշանակում է «գեղալի» (Վ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Նշվ. աշխ., էջ 104): Ավելի վաղ Հր. Աճառյանը Գեղամ անվանը վերագրել է խալդյան ծագում միաժամանակ չբացառելով նրա առաջացումը Գեղամայ (ծով, լեռ) տեղանունից (Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 452):*

[51] *Ըստ Ս. Պետրոսյանի՝ Գեղամ անունը «պարունակում է նույն գեղ արմատը և ամ անձնանվանակերտը» (Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 189):*

[52] P t o l e m a e i. Geographica. Parisiis, 1901, V, 12,30. А. Д. В е й с м а н. Греческо-русский словарь. М., 1981, с. 773. *Ս. Ումանյանը ենթադրում է, որ անվան հիմքն է* «leukos *«լույս», «ճճանչ», որը ծագում է հնդեվրոպական նախալեզվի* *leuk *«լույս» բառից և «Լիքնիտիս անունը Գեղամա ծովանվան թարգմանությունն է» (Ս. Ո ւ մ ա ռ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 42): Հ. Կարագյոզյանը Այրարատ Նահանգանվան ստուգաբանության կապակցության անդրադարձել է նաև Լյուխնիտիս լճանվանը: Նրա կարծիքով, Այրարատը «ծագում է* *Ատրագատա (*Atradāta) > *Այրարատ անցումով, որտեղ*

Սևան անվան մեջ կարելի է տեսնել «անձրև, անձրևել» նշանակությամբ հնագույն *seu/ *su հիմքը, որը սկիզբ է առնում վաղ հնդեվրոպական բարբառային ընդհանրության ժամանակներից՝ նախնական նշանակությամբ «ճզմելով քամել, մզել, կորզել»[53]: Ընդ որում, «անձրև կանչելը պատկերանում է որպես (ջրի) դուրս մղում մի ինչ-որ ակտիվ սկզբի՝ աստվածության կողմից»[54]: Հարցի առնչությամբ կարևորվում է հայերեն անձրև (an+dre-w) տերմինը, որը բառացի նշանակում է «երկինք ջուր»[55]: Հետևաբար՝ Սևան լճանունն արտահայտել է «երկնային ջուր» իմաստը: Ուշագրավ է, որ Սևանա լճի թուրքերեն Գյոկ-չա «Կապույտ (երկնագույն) ջուր» անվանումը, որը ուշ ժամանակի տեղական անվան թարգմանությունն է, ըստ էության նշանակում է «երկնային ջուր»: Ըստ այդմ, պետք է ընդունել, որ երկնային ջրի պաշտամունքին են նվիրված եղել Գեղամա լեռներում գտնվող շրապաշտական կուռքերը՝ վիշապները[56]: Բիայնական աղբյուրներում լիճը հայտնի է որպես Ծուե («ծով»)[57], նախնական իմաստով՝ «ջուր»:

Այսպիսով, Գեղամի գաստակերտ և Գառնի տեղանուններին պատմահամեմատական վերլուծությունը թույլ է տալիս պարզել, որ գրանց ծագումը նույնպես կապված է եղել լույսի աստվածության պաշտամունքի հետ: Այդ մասին է վկայում նաև I դ. Գառնիում արևի աստված Միհրին նվիրված տաճարի կառուցման փաստը[58], հավանաբար, նախկին պաշտամունքային վայրի տեղում:

տեղանվան առաջին բաղադրիչը (հնդեվրոպական ater «կրակ»), հավանաբար, կապված է բնական (էլմայի կրակներ կոչվող) երևույթի հետ (լեռների լուսավորվող կատարները), ինչը վաղուց նկատվել է Արագածի վրա և ժողովուրդն այն կոչել է Լուսավորչի կանթեղ, անգամ ծովերում նավերի կայմերին, հրվանդանների սուր մասերում, ինչը, հավանաբար, եղել է նաև Սևանա լճի մերձակայքում, որից էլ Լյուխնիտիս (lychnitis) լճանունը և Նորատուս գյուղանունը, որն, անշուշտ, պետք է եղած լիներ * Նարատուս... (Ց ո վ. Կ ա ր ա գ ե ո զ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 17):

[53] Т. В. Гамкрелидзе, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 679–681: Որոշ հետազոտողներ Սիևնիք (< Սեևնիք) երկրանունից են առաջացած համարում Սեևան լճանունը (Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Ն. Մառը և VII դ. հայոց «Աշխարհացույց»-ը. Մառը և հայագիտության հարցերը. Երևան, 1968, էջ 81, Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 191): Հ. Կարագյոզյանը ենթադրել է, որ մ.թ.ա երիայնական և ասսուրական արձանագրություններում վկայված Կուանե և Կիուանա բնակավայրերը, որոնք համապատասխանաբար տեղադրված էին Ուրմիա և Վանա լճերի ավազաններում, ավելի ուշ հանդես են գալիս որպես Սևան: Նրա կարծիքով Սևանա լիճը նույնպես կոչվել է Կուանե, որից և առաջացել է հետագայի Սևան անունը (Ց ո վ. Կ ա ր ա գ ե ո զ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 242–245):

[54] Т. В. Гамкрелидзе, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 679:

[55] Н. Я. М а р р. Նշվ. աշխ., էջ 476:

[56] Հայաստանում եղել են ջրի աստվածություններ (դևեր): Ինչպես, օրինակ, «nar ծովային աստվածությունը, որը հանդես է գալիս çovinar «ծովի հավերժահարս» (cov «ծով»-ից), Oskinar «ոսկի-հավերժահարս (= ոսկյա հավերժահարս)», Hełinar «ջրահարս» /բուն իմաստով՝ «հեղուկի, տեղատարափ անձրևի», Nurin (*Narin-ից) կանացի անվանումներում» (Г. А. К а п а н ц я н. Историко-лингвистические работы, т. II, с. 321): Nar-ի պաշտամունքի հիման վրա ձևավորված տեղանուն է *Նարատուս գյուղանունը:

[57] Ց ո վ. Կ ա ր ա գ ե ո զ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 245:

[58] К. В. Т р е в е р. Очерки по истории культуры древней Армении. М. – Л., 1953, с. 93.

СТРАНА ГЕГАМА В ГЕОГРАФИЧЕСКИХ НАЗВАНИЯХ

АРМЕН КАРАГЕЗЯН

Р е з ю м е

Географические названия – достоверные и неоценимые первоисточники и имеют большую познавательную ценность. Историко-сравнительный анализ древнеармянских топонимов может существенно расширить круг наших знаний об исторической Армении, содействуя восстановлению особенностей ее общественного, экономического, политического и культурного развития. В статье дается научное объяснение происхождению ряда топонимов страны Гегама (бассейн оз. Севан), что крайне необходимо для создания целостной истории данного региона.

THE GEGHAMA COUNTRY IN GEOGRAPHICAL NAMES

ARMEN GHARAGYOZYAN

S u m m a r y

Place names are reliable and priceless sources, and they have great cognitive value. Historical comparative analysis of ancient Armenian place names may noticeably widen our knowledge about ancient Armenia, thus contributing to restore peculiarities of its social, economic, political and cultural evolution. This article gives new scientific explanation of the origin of some place names of the Geghama country (basin of the Lake Sevan), which is extremely necessary to recreate the entire history of this region.